


Ափյափոյ եղած վճիռներ կան Վիշապին մասին, մերայնոց մօտ: «Վիշապը Հնդկաստանէն արեւելեան երկիրներու եւ հին Հայաստանի մէջ մուտք գտած ըլլալ կը թուի, որովհետեւ ան Հնդկական վազեմի դրօշի նշան է. Վիշապը մեր մէջ վաղարշակի օրով մուտք գտած ըլլալ կը կարծէ Զենոք՝ պատմիչներէն: Անոր քանդակները գտնուած են Երզնկայի մէջ: Մեր Ուրարտացի նախահայրերուն Վիշապը երախարաց եօթը գլուխ ունէր, եւ կը խորհրդանշէր եօթը հօր նահանգները»¹: Ես ոչ եօթ գլխով Վիշապի, եւ ոչ ալ իր իմաստին պատմական փաստերուն հանդիպած եմ Ուրարտական ունուձնասիրութեանցս մէջ: Իսկ Վիշապին Հնդկաստանէն եկած ըլլալուն համար, ոչ փաստ կայ եւ ոչ ալ ապացոյց, եւ Վիշապը կրնայ Հնդկական վազեմի դրօշին իբր նշան գործածուած ըլլալ՝ առանց անոր Հայկական աստուածութիւն մը, եւ շատ հին ըլլալուն արգելք դառնալու: Գալով Վազարշակ Ա.ի, կ'ականարկուի որ թագաւորեց 149-127 (Ք. Ա.), բայց մենք արդէն տեսնը որ Քրիստոսէ 714 տարի առաջ Վիշապը կար եւ կը պաշտուէր Ուրարտուի, որով Հայաստանի մէջ: Իսկ Երզնկայի մէջ գտնուած Վիշապի քանդակները հաճելի նորութիւն մը եղան ինձի: Ատիկա դիւրաւ կը բացատրուի եթէ նկատի առնենք որ Անահիտ Մայր աստուածուհին ամենէն համբաւուր մեհեանը (աշխարհի մէջ) կը գտնուէր հոն, իմ հայրենի եւ մայրենի գաւառիս մէջ:

Վիշապապաշտութիւնը Քրիստոնէութենէն առաջ Հայաստանի եւ Հայոցս մէջ բարիի եւ բարձրի նկարագիրը ունէր: Քրիստոնէութիւնը չկրցաւ ջնջել զայդ, այլ հակազդեց եւ շրջեց զայն չարի, այսու հանդերձ (ինչպէս որ պիտի տեսնենք) ժողովրդեան խուլ եւ անխառն ծաւրերուն մէջ պահեց՝ անգիտակից՝ բարին: Մ. Մինասեան կը գրէր. «Ես Վիշապապաշտութեան ալ անխղիւի կապակցութիւնը ցոյց տուած եմ մայրապաշտութեան հետ, եւ ճորոխի Աւագանին եւ

Արարտեան հովիտներուն մէջէն վերջերս գտնուած բազմաթիւ Քարէ վիշապներուն ներկայութիւնը իբր ապացոյց յիշած եմ այն իրականութեան թէ նոյն իսկ նոր Քարէ դարուն Ք. Ա. հինգերորդ հազարամեակին, երբ ամենայն հաւանականութեամբ Սումերացիք դեռ իջած չէին Բա-



Kaiser Friedrich Museum, Berlin
Փոքր Ասիոյ գորգ՝ Վիշապ-Փիւմիկ

բելաստան, Հայաստանի մէջ արդէն կը տիրէր մայրապաշտական եւ վիշապապաշտական կրօնը»²: Անշուշտ շատ պիտի երկարէր ուսումնասիրութիւնս եթէ աշխատէի այս ուղղութեամբ, ստիպուելով երեւակայել Ք. Ա. հինգերորդ հազարամեակին, ասկէ 7,000 տարի առաջուան ինդիւրները, բայց Մինասեանի վերի առ-

1. Օ. Գ. Գալուստեան, Հայկական Գրօշակի հարցը, Թէոդիկ 1923, էջ 184.
2. Հ. Կոյնակ, 1927, էջ 651.